ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-Ի՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 28.10.2009Թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 4-277 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 8-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ մասի՝ աշխատակարգային նիստում քննելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածի, 233 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի, 231 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 233 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 234 հոդվածի 1-ին մասի, 234 հոդվածի 3-րդ մասի, 241.1 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 241.3 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի դիմումը քննության ընդունելու մասին հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ն դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածի, 233 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի, 231 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 233 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 234 հոդվածի 1-ին մասի, 234 հոդվածի 3-րդ մասի, 241.1 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 241.3 հոդվածի սահմանադրականությունը:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում նախատեսված է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.3 հոդվածը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ

մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը:

Դիմողի կողմից վիճարկվող՝ օրենսգրքի 233, 234 հոդվածների, 231 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի ՍԴՈ-690, ՍԴՈ-754, ՍԴՈ-765 որոշումները:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Ըստ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեեւ դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար:

Դիմողն օրենսգրքի 226 հոդվածի սահմանադրականությունը վիճարկում է այն առումով, որ այն՝ որպես վճռաբեկ բողոք բերելու հիմք չի նախատեսում «... անձանց հիմնարար իրավունքները սահմանափակելու, Սահմանադրության 92-րդ հոդվածի պահանջների ամբողջական կատարումը չապահովելու՝ օրենքի ոչ միատեսակ կիրառության դեպքերը եւ ոչ միատեսակ կիրառության հնարավորությունը որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու հիմք ...»:

Օրենսգրքի 226 հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքի եւ օրենսգրքի 227 հոդվածի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից մատնանշված վերոհիշյալ հիմքն ըստ էության 226 հոդվածի 1-ին մասում նշված ընդհանուր հիմքի շրջանակներում է եւ հանդիսանում է նյութական կամ դատավարական իրավունքի խախտման դրսեւորում: Ուստի վճռաբեկ բողոք բերելու նշված հիմքն առանձին դրույթով ամրագրելն օրենսդրական տեխնիկայի հարց է, եւ այդ առնչությամբ սահմանադրահիրավական վեճ չի առաջանում:

Դիմողը, ի հիմնավորումն 241.1 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում ամրագրված դրույթի հակասահմանադրականության, մատնանշում է այն հնարավոր բացասական հետեւանքները, որոնք կարող են առաջանալ այդ դրույթում՝ օրենքի կամ միջազգային պայմանագրի կոնկրետ դրույթը վճռաբեկ դատարանի որոշման մեջ մատնանշելու պահանջի բացակայության պայմաններում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43

հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների մասերին հղում կատարելիս նշվում են ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի համարը: Իրավական այլ ակտի մասերին հղում կատարելիս նշվում են իրավական ակտի կրճատ անվանումը, կետի համարը:

Դիմողի փաստարկները, ըստ էության, վերաբերում են վիճարկվող նորմի՝ իրավակիրառական պրակտիկայում դիմողի մատնանշած հնարավոր մեկնաբանությամբ կիրառման իրավական հետեւանքներին: Մինչդեռ դիմողի կողմից չի ներկայացվել նման իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ որեւէ փաստ: Ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նշված իրավակարգավորման պայմաններում իրավական ակտն ընդունող մարմինն ըստ էության անհրաժեշտության դեպքում հղում է կատարում օրենքի կամ այլ իրավական ակտի համապատասխան հոդվածներին, դրույթներին:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի, 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի դիմումի քննության ընդունումը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 նոյեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ-102